

09.10.2017թ.

ժ.11:00

*Մասնակցում էին՝ Ս.Մասցականյան (խորհրդի նախագահ), Գ.Ասանյան, Գ.Գևորգյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան, Ս.Դավթյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)  
Հրավիրված էին՝, Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա.Վարդանյան (իրավաբանական բաժնի պետ), Լ.Մարկոսյան (տրնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Հ.Տիրիգյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ), Կ.Կույունջյան, Ն. Բաղդասարյան, Ա.Համբարձումյան, Մ.Պետրոսյան, Լ.Քալանթարյան, Ս. Ազարյան:*

**Օրակարգի նախագծում չորս հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 18-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

2. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 1-ՏԳ (տարեկան), «Ապրանքային բորսայի գործունեության վերաբերյալ» (Ձև 1-Բորսա (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 29-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ.Տիրիգյան/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաղորդում Թայլանդի Բանգկոկ քաղաքում 2017 թվականի օգոստոսի 28-ից 31-ը «Բնակչության և սոցիալական վիճակագրության հարցերով տարածաշրջանային համակարգող խմբի» առաջին հանդիպմանը և «Տվյալներ, որոնք չեն անտեսում ոչ մեկին» խորագրով փորձագիտական աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Կ.Կույունջյան/*

3.2. Հաղորդում Ֆրանսիայի Մոնպելյե քաղաքում 2017 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ENI-SEIS II EAST) տարածաշրջանային աշխատանքային խմբի համար կազմակերպված մասնագիտական ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Համբարձումյան/*

3.3. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 12-ից 15-ը Պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների միջազգային ֆեդերացիայի (ԱՄՖ) 7-րդ կոնգրեսին, ԱՄՖ-ի 25 ամյակին նվիրված միջոցառումներին, ԱՄՖ նոր նախագահ ընտրելուն և ԱՄՖ քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Մ.Պետրոսյան/*

3.4. Հաղորդում Բելոռուսի Մինսկ քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 13-ից 15-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության որակը. մարտահրավերները և հնարավորությունները» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների և Մոնղոլիայի համար բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս. Մասցականյան, Ա.Սաֆյան/*

3.5. Հաղորդում Ավստրիայի Վիեննա քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 14-ից 15-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Եվրոպայի Շրջակա միջավայրի գործակալության /ԵՇՄԳ/ մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի, Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի /ՇՄՄՏՀ/ գործունեության գնահատման շրջանակների փորձարկմանը նվիրված սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

3.6. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Պուշկին քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 12-ից 19-ը Ռուսաստանի Դաշնության Ազգային հետազոտական համալսարանի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի» հրավերով կազմակերպված «Բնակչություն և զարգացում» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Ս. Ազարյան/*

3.7. Հաղորդում Կորեայի Դեջոն քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 25-ից 27-ը «Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրության արտադրության և տարաբնույթ սպառողների շրջանում տվյալների տարածումը,

երկրների միջև փորձի փոխանակումը, աշխատանքային միգրացիայի վիճակագրության վերջին միջազգային ստանդարտների վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

#### 4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

#### Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 18-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

#### Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի «2017 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 18-Ն որոշմամբ հաստատված հավելված 3-ի 19-րդ և 20-րդ կետերի «Թողարկման (հրապարակման) ժամկետը» սյունակում «սեպտեմբեր» բառը փոխարինել «նոյեմբեր» բառով:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

#### Լսեցին՝

2. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 1-ՏԳ (տարեկան), «Ապրանքային բորսայի գործունեության վերաբերյալ» (Ձև 1-Բորսա (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 29-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ.Տիտիկյան/*

#### Որոշեցին՝

Հաստատել «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 1-ՏԳ (տարեկան), «Ապրանքային բորսայի գործունեության վերաբերյալ» (Ձև 1-Բորսա (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգներն, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 29-Ն որոշումը:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

#### Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաղորդում Թայլանդի Բանգկոկ քաղաքում 2017 թվականի օգոստոսի 28-ից 31-ը «Բնակչության և սոցիալական վիճակագրության հարցերով տարածաշրջանային համակարգող խմբի» առաջին հանդիպմանը և «Տվյալներ, որոնք չեն անտեսում ոչ մեկին» խորագրով փորձագիտական աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Կ.Կույումջյան/*

3.2. Հաղորդում Ֆրանսիայի Մոնպելյե քաղաքում 2017 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ENI-SEIS II EAST) տարածաշրջանային աշխատանքային խմբի համար կազմակերպված մասնագիտական ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Համբարձումյան/*

3.3. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 12-ից 15-ը Պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների միջազգային ֆեդերացիայի (ԱՄՖ) 7-րդ կոնգրեսին, ԱՄՖ-ի 25 ամյակին նվիրված միջոցառումներին, ԱՄՖ նոր նախագահ ընտրելուն և ԱՄՖ քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Մ.Պետրոսյան/*

3.4. Հաղորդում Բելոռուսի Մինսկ քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 13-ից 15-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության որակը. մարտահրավերները և հնարավորությունները» խորագրով Արևելյան

Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների և Մոնղոլիայի համար բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս. Մասցակյանյան, Ա. Սաֆյան/*

3.5. Հաղորդում Ավստրիայի Վիեննա քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 14-ից 15-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Եվրոպայի Շրջակա միջավայրի գործակալության /ԵՇՄԳ/ մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի, Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի /ՇՄՄՏՀ/ գործունեության գնահատման շրջանակների փորձարկմանը նվիրված սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

3.6. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Պուշկին քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 12-ից 19-ը Ռուսաստանի Դաշնության Ազգային հետազոտական համալսարանի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի» հրավերով կազմակերպված «Բնակչություն և զարգացում» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Ս. Ազատյան/*

3.7. Հաղորդում Կորեայի Դեջոն քաղաքում 2017 թվականի սեպտեմբերի 25-ից 27-ը «Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրության արտադրության և տարաբնույթ սպառողների շրջանում տվյալների տարածումը, երկրների միջև փորձի փոխանակումը, աշխատանքային միգրացիայի վիճակագրության վերջին միջազգային ստանդարտների վերաբերյալ գիտելիքների ու հնտությունների կատարելագործումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

### **Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**ՆԱԽԱԳԱՀ**

**Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**